դամեանը դուրս էր բերուած զանազան դերերում։ Դա հանդիսի միակ աջող կտորն էր։ Տիկ. Ոսկանեան հարուստ ձայն ունի, բայց երգում է դեռ շատ թոյլ։ Ափսոս է այդ ձայնն անմշակ թողնել։

Ինչպէս, հանդէսն անցաւ շատ անշուք, չնորհիւ կազմողների անփութութեան։

—

Իմ գուշակութիւնը Բագուի խմբի մասին դժբաղդաբար կատարուեց։ Սէզոնի սկզբից ես ասել էի, որ խմբի ղեկն այնպիսի մարդկանց ձեռքումն է, որ երկար վարել նրան չեն կարող։ Այդպէս էլ եղաւ։ Դեկտեմբերի վերջից խումբը լուծուել է, դերասանները հեռացել են Բագուից։ բացի պ. Արմենեանից, որ ինչ-որ պահանջներ է անում բեմի ղեկավարներից։ Իսկ Թաղիեվի թատրոնի կապալառու Լեբեդինսկին դիմել է դատարանին և պահանջում է թատրոնի վարձ սեզոնի մնացորդ օրերի համար։

Հայ թատրոնի համար դատարանի դռները քաշքշուելը մի նոր խայտառակութիւն է, որի նմանը դեռ չի եղել նրա պատմութեան մէջ։ Գեղեցիկ ապացոյց, որ թատրոնի ղեկավար լինելը ամեն մարդու խելքի բան չէ և որ չի կարելի մի այսպիսի հիմնարկութեան ղեկը յանձնել մի ինչ որ նաւթային հաշուապահի կամ գործակատարի...

ԴԻՏՈՂ.

—

ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիզում անցեալ տարուանից հաստատուել է և արդէն կանոնաւոր գոյութիւն ունի այս համակրելի ընկերութիւնը, իբրև միակ գեղարուեստական մարմին ամբողջ Կովկասում։

Ընկերութիւնը անցեալ տարուայ վերջերին տուեց մի ոչ այնքան չքեղ Երեկոյթ և լետոյ այսպէս կոչուած փառքի Ցաճարում բաց արաւ պատկերահանդէս մինչև յունուարի կէսը։ Մենք մ. քանի անգամ այցելեցինք այդ պատկերահանդէսը։ Ի ցոյց են դրուած տեղական բոլոր չնորհքով և անչնորհք նկարիչների նկարները։ Քանակութեան և որակութեան կողմից առաջին տեղն են բռնում պ. պ. Բաշինջաղեանի և Զանկովսկու պէյզաժները։ Պ. Բաշինջաղեանը 2 տարի Փարիզում աշխատելուց լետոյ այժմ աւելի նուրբ է նկարում։ Նրա վրձինը նկատելու չափ առաջադիմութիւն է արել։ Պ. Զանկովսկու նկարները կրում են ծերունական թուլութեան դրոշմը. թէև դարձեալ գրաւիչ է նրա վրձինը։ Միւս նկարիչներից աչքի են ընկնում Շմերլինգի և Գաբաեվի դիմանկարները։ Պ. Գաբաեվը չնորհքով նկարիչ է, բայց ծոյլ է և առաջադիմութիւն չի անում։ Մի քանի նկարիչներ խայտա-

ուսակութեան համար են ասպարէզ եկել։ Ոմն պ. Ֆոգլ, ի ցոյց է դրել քանի չափ մանկական խծբծանքներ, որոնք դիտողի կարեկցութեան զգացումն են շարժում դէպի «նկարչի» ողորմելի վրձինի անզօրութիւնը։

Ընդհանրապէս պատկերահանդէսը աղքատ է և բաւարար ապաւորութիւն չի գործում։ Բայց և այնպէս ուրախալի է, որ մեր փոքրաթիւ նկարիչներն այժմ միացել են և ընդհանուր ոյժերով են լայնուում հասարակութեանը։ Հերիք է ինչքան ինտրիգներով կերակրուեցին, թող այժմ ընկերաբար աշխատեն և կռուեն միջակութեան դէմ...

Ե.

Սենկեւիչի կարծիքը բեմին ծառայողների մասին։

Նշանաւոր լեհական գրող Սենկեվիչը, որ տնա տասը տարի է համաշխարհային առաջին վիպասանն է համարուում, իւր բարձր գեղարուեստական երկերից մէկում («Այն երրորդը») հետեւեալ խորհրդածութիւնն է անում դերասանուհիների և առհասարակ արտիստների մասին։

Դերասանուհիների մէջ անշուշտ կը գտնուին մարմնապէս անմեղ կանայք, բայց եթէ նրանց կօրսեներր կարողանային երբ և է մատնել իրանց տիրուհիների տենչանքները, — նոյն իսկ ամենաանամօթ կապիկը կարող էր կարմրել, իմ կարծիքով, իւր մարմնի բոլոր անմաղ մասերում։

Բեմը փչացնում է հոգին, մանաւանդ կանանց հոգին։

Դժուար է պահանջել այն կնոջից, որ ամեն երեկոյ պատկերացնում է սէր, հաւատարմութիւն, աղնուութիւն և այլն, որ նա վերջի վերջոյ չունենայ բնազդական գիտակցութիւն թէ այդ բոլոր առաքինութիւնները միմիայն բեմի լարդարութեան պարագաներ են, որոնք մտնում են դրամատիքական և բեմական գեղարուեստի շրջանը, բայց չունեն ոչ մի կապ կեանքի հետ։

Արուեստի և իրական կեանքի մէջ եղած ահագին տարբերութիւնն էլ աւելի ամրացնում է կանանց մէջ այդ հայեացքը։ Մրցումը և նախանձը ծափահարութիւնների համար թունաւորում են սրտի բոլոր աղնուագոյն ձգտումները։ Ցարատեւ ընկերակցութիւնը այնպիսի փչացած մարդկանց հետ, որպիսիք են դերասանները, գրգռում է նրանց մէջ կրքեր։ Անզօրալի ամենաճերմակ կատուն կարող է կեղտոտուել այդ պալմաններում։ Սրանց կարող է լաղթել միայն մեծ տաղանդը որ մաքրում է գեղարուեստի բովանոցում, կամ այնպիսի ծայրէ ի ծայր էսթեթիկական բնոյթ, որի մէջ չարը չի թափանցում, ինչպէս ջուրը չի թափանցում կարապի փետուրների մէջ...